80. ԷՐԿՈՒ ԱԽՊԵՐ

Էրկու ախպեր կեր: Շատ զանգյինացան: Ճուչ ախպեր ռես էր, ատ պըստիկն էլ ռենջբերուքին կաներ, մանջկալուքին կաներ, շատ զանգյինացան, սատանեն էսաց. - Բո՛շ ը. իս չը յամ ըզմեմեկլը աչիչ տամ խանիլ՝ բո՛շ ը:

Սատանեն կյընաց, էսաց. - Աստված քու տուն քա՛նը, քու ճուչ ախպեր ապահին թըլիր վար թիվքիրուն, վար պատըծերքիրուն կան կը կա. չէ՞ տու էլ անու ախպերն իս, ռենջբերուքի՞ն կանիս: Կյընա՛, տու էլ անու պես քյե՛փ արա:

Ախպեր ըզմանջ իթող, իրը:

Իրը տուն, էսաց. - Իս վար չըմ անը:

Ճուչ ախպեր անու էսաց. - Ա՛ռ իմ ապահին քյի, տու ռեսուքի՛ն արա, իս էրթամ վար անիմ:

Էլավ ճուչ ախպեր, կյընաց, պըստիկ ախպեր ապահին խակավ, կյընաց տանըսկըտիր չալըմ կանը, հոքյմըքին զափթիյեն իրը, կանչից. - Ռե՛ս, արը՛:

Իպը, թուրչա զրուցից, չըխասկըցավ, չըխո թուրչա չը կյը՛տնա:

Էրկու տիր զրուցից, չըխասկըցավ, շամակի՛մ էզար, էսաց. - Շա՛ն որտը, չըս կյըետընա թուրչա, ռեսուքին մ՛ա՛նը:

Էլավ կյընաց մատ ուր ճուչ ախպեր, էսաց. - Տո՛ւ իս վարիմ, տու կյընա՛ տուն:

Ճուչ ախպեր էսաց. - Էվարին խըդրաց կէրթանքյ տուն:

Էվարին էլան, իկին տուն:

Խըլիսուն պըստըկ ախպեր կյընանց վանր. էլմէլ սանտանեն իրը, էսաց. - Աստված քու տուն քանկը. քու ախպեր քյեփ կանը, էլմէլ տու իկիր իս վա՞ր կանիս:

Իթող ըզվանր, իրը տուն, կյընանց աշխարքյվե, էրեցըմ հանանս կը տա կանչիլ, կըսը. - Վով կա զի մըշանկութին անը, չուր պուպու կա, իս անու հանխկ տամ, թը չըկարցավ, զոլ կաշը տը խանիմ անու քանմկեն:

Խըլիսուն ատ ռեսը ախպեր կյընանց, էլանվ իրիցու մըշակ, էրեց էսաց. - Խըլիսուն իմ տաժին կը տընիմ հերճուվ քյի, կյընա՛, դուր իմ տաժին կը նըստը, հանտը վանը՛:

Տաժին կյընանց, սոլանբ նըստավ: Մըշակ կյընանց հանտը, անկարելը պան ը, հանտը չըվանրվը:

Էլանվ, իրը տուն, իրիցուն էսաց. - Չըկարցա վանրեր, զոլ կաշը իմ քանմկեն խա՛ն, իս էրթամ:

Էրեց զոլ կաշը էխան մըշակուչ քանմկեն, մըշակ էլանվ, իրը տուն:

Ճուչ ախպեր էլանվ, կյընանց մոտ:

Էրեց էսաց. - Ա՛րը, ի՛լը ձի մըշակ, չուր պուպու կա, քու հանխկ տամ. թը տու չըկարցար, քու քանմկեն զոլ կաշը կը խանիմ, յաս քու տուն: Խըլիսուն իմ տաժին կը տընիմ հերճուվ քյի, կէրթա, դուր կը նըստը, հանտը վանը՛:

Տաժին կէրթա, կը նըստը սոլանբը կյըլոխ: Մըշակ տաժին ի կը կյըլուրե՝ կը կա կյիտու պերան կը տանտրը, մըշակ կը կա, կը լըծը, վանը: Էրեց կիլնը կիրիշկը, կը խը՝ մըշակ լըծիր, կը վանը:

Կը կա տերոխնուն կըսը. - Մի մըշակ կը վանը:

Ախչիկ խաց կը տանը մըշակուչ, չըգյըխշնա յա մա մըշակ, կը տանչը մըշակուչ, կըսը. - Ա՛րը, քյիկ խա՛ց տար:

Կը կա, զախչիկ խանյտանռակ կանը, ուր խաց կը տանը:

Ախչիկ լանլելեն կը կա տուն:

Էրեց ուր կընգանն կըսը. - Բոշ ը, մի մըշակ զոլ կաշը տը խանը մի քանմկեն: Հանսոր հիրիկուն իմ պառավ մեր կը խանինքյ նա ծիրնը ծառվե, հիրիկուն մըշակ կը կա տուն, սընքյ պուպու իկիր, քու հանխկ տանքյ, կյընա:

Էրեց զուր մեր քխանը ծառվե, հիրիկուն մըշակ կը կա, իրիցու մեր կըսը՝ պո՛ւ-պո՛ւ:

Դոր էրեց կըսը. - Մըշա՛կ, պուպու իկիր, քու հանկ տանքյ, կյընա՛:

Մըշակ կիլնը, կըսը. – Տ'իլնիմ մըհա նա ի՞նչկ ը ծառվե:

Կիլնը պանդարըմ կը զարկը, իրիցու մեր ծառեն կը պիրը տակ, կանը տաժ:

Էրեց կըսը. - Կընը՛կ, ի՛լը, կատա թըխը՛, փախինքյ, էրթանքյ. մի մըշակ զոլ կաշը տը խանը մի քամկեն:

Կատա թըխիցին, տըրին կողովվե: Մըշակ իրը, մըտավ կողովվե, կատեքյ իտը վար ուր: Իրիցու կընըկ իրը շըլկից, բոմ էն, բոմ էրեց կը շըլկին:

Մըշակ կողովվե կը պուզը, կը կա վար իրիցու քամկին, կըսը. - Կընը՛կ, քանի՛մ եղ շատ իս տըրիր հինը, կը խալը, կը կա վար ին քամկին:

Կընըկ կը շըլկը, կըսը. - Ա՞խ, տերտե՛ր, քանըմ ծա՛նդր ը նա կատեքյ:

Փշու՛մ էլ կացին, շըներ իկին թախ էրեց, իրիցու կընըկ:

Էրեց էսաց. - Կընը՛կ, մըկա մի մըշակ ընգյներ ստան:

Մըշակ էսաց. - Ան ի՞նչկը, տե՛րտեր:

Էլավ, ըզշընիր փարատից դեն-դեն:

Էրեց էսաց. - Կընը՛կ, մի պան բոշ ը, էրթանքյ, վար կարմընջին կը քյընինքյ, մի մըշակ կիցկինքյ կեստեղ, կյիշիր իս կանխիմ, կանիմ՝ ըհը՛, տուն էլ արա՝ ըհը՛, ըզմըշակ պըռնինքյ, թըլինքյ կյետ:

Մըշակ կյիշիր էլավ, ընգավ կուշտ, կընըկ մնաց կեստեղ: Տերտեր կյիշիր անխավ, արավ՝ ըհը՛, մըշակն էլ արավ՝ ըհը՛, իրիցու խիյալ, թ'անու կընըկն ը, պըռնիցին թըլցին կյետ:

Տերտեր էսաց. - Կընը՛կ, տեսա՞ր:

Մըշակ էսաց. - Ան ի՞նչկ ը, տե՛րտեր:

Էրեց էսաց. - Տու իմ կընըկն էլ թըլցիր կյետ: Ա՛րը, զոլ կաշը իմ քամակեն խա՛ն, կյընա՛ քու տուն:

Մըշակ իրը, զոլ կաշը իրիցու քամկեն էխան, կյընանց տուն, էսաց. - Ախպե՛ր, քու թոլ խանիցը: